



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 8

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2010 թվականի օգոստոսի 25-ից

● ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ	4, 158
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 160
 ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	25, 178
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	27, 180
 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	29
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	31
 <i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	150
 ՑՈՒՑԻՉՆԵՐ	151
 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	154
 ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	182

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 158
Сведения о выданных патентах.....	6, 160
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	25, 178
Сведения о выданных патентах.....	27, 180
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	29
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	31
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	150
УКАЗАТЕЛИ.....	151
СООБЩЕНИЯ.....	154
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	182

CONTENTS

INVENTIONS.....	4, 158
Information on granted patents.....	6, 160
UTILITY MODELS.....	25, 178
Information on granted patents.....	27, 180
TRADE MARKS.....	29
Information on registered trade marks and service marks	31
Information on renewal of effect of trademark registration	150
INDEXES.....	151
REPORTS.....	154
TWO-LETTER CODES.....	182

q3n1str

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2009) (11) 2400 (13) A
A01J 25/00
 (21) **AM20080045** (22) **18.04.2008**
 (45) 01.10.2008
 (71) Սամվել Սմբատի Մանուկյան (AM), Լևոն Թումանի Մանանդյան (AM), Յրաչյա Ավետիքի Ավետիսյան (AM)
 (72) Սամվել Սմբատի Մանուկյան (AM), Լևոն Թումանի Մանանդյան (AM), Յրաչյա Ավետիքի Ավետիսյան (AM)
 (73) Սամվել Սմբատի Մանուկյան, 3101, Գյումրի, Ֆուրմանովի փող. 2-րդ նրբ. 12ա (AM), Լևոն Թումանի Մանանդյան, 3101, Գյումրի, Լ. Մադոյան 149 (AM), Յրաչյա Ավետիքի Ավետիսյան, 3101, Գյումրի, Զերազի 19, բն. 12 (AM)
(54) Պանրի մամլակաղապար
 (57) Մամլակաղապարն ունի վերին և ստորին հիդրոմխոցներ, վերին և ստորին կափարիչներ, կողմնային չորս նիստ, չորս սալիկ, սալիկների ու նիստերի միջև բացվածքի կարգավորման հանգույցներ: Սալիկներն իրենց կողմնային եզրերով ամրակցված են իրար և կազմում են կաղապար: Կարգավորման հանգույցներից յուրաքանչյուրը մեկ ծայրով ամրակցված է համապատասխան սալիկին, իսկ մյուս ծայրով՝ համապատասխան նիստին: Կարգավորման յուրաքանչյուր հանգույցն իրականացված է հիդրոմխոցի տեսքով: Հիդրոմխոցի պտուտակային միացակողը ամրակցված է պտուտակային անցք ունեցող տափօղակին, որը մանեկի միջոցով սևեռված է համապատասխան նիստի կոշտության կողի ակոսի մեջ, իսկ գլանն ամրակցված է համապատասխան սալիկին:

Ընդլայնվում են մամլակաղապարի ավտոմատացման հնարավորությունները, պարզեցվում է կառուցվածքը, 3 նկ.:

(51) (2009) (11) 2401 (13) A
A23C 21/00
 (21) **AM20100003** (22) **15.01.2010**
 (45) 25.08.2010
 (71) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ (AM)

(72) Արմեն Եղիշի Աղաջանյան (AM), Ավետիս Յովհաննեսի Ծատուրյան (AM), Գայանե Ժորժիկի Յովհաննիսյան (AM), Կարինե Իմրանի Եղյան (AM), Աշոտ Սերոբի Սաղիյան (AM)

(73) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ, 0056, Երևան, Գյուրջյան 14 (AM)

(54) Կաթի աղազրկված շիճուկի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կաթի արդյունաբերությանը, մասնավորապես՝ կաթի շիճուկի ստացման եղանակներին և կարող է կիրառվել կաթի աղազրկված բիֆիդոգեն հատկությամբ օժտված շիճուկի ստացման համար:

Կաթնաշոռի կամ պանրի շիճուկը հավաքում են, տաքացնում pH(7,3±0,3) արժեքի տիրույթում, գտում, իզոմերացնում: Չտմամբ ստացված վերնստվածքային հեղուկը ենթարկում են գերգտման, որի արդյունքում ստացված պերմեատը մեկ փուլով էլեկտրամեմբրանային եղանակով աղազրկում են և հիմքով մշակում: Իզոմերացումից հետո շիճուկը չեզոքացնում են, այնուհետև գունազրկում և ստացված լակտոլոզով հարուստ լուծույթից մնացորդային լակտոզը հեռացնում են բյուրեղացմամբ:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը:

(51) (2009) (11) 2402 (13) A
A61B 5/16

(21) **AM20100026** (22) **02.03.2010**
 (45) 25.08.2010

(71) Հարություն Արտավազդի Բաբայան (AM), Վարդան Ղազարի Գեղամյան (AM)

(72) Հարություն Արտավազդի Բաբայան (AM), Վարդան Ղազարի Գեղամյան (AM)

(73) Հարություն Արտավազդի Բաբայան, 2215, Կոտայքի մարզ, գյուղ Գառնի (AM), Վարդան Ղազարի Գեղամյան, 2215, Կոտայքի մարզ, գյուղ Գառնի (AM)

(54) Հոգեշարժիչ բազմագործոն ախտորոշման սարք

(57) Գյուտը վերաբերում է հոգեբանական հետազոտությունների անցկացման, մասնավորապես՝

մարդու հոգեշարժիչ ֆունկցիաների ախտորոշման սարքերին և կարող է լայնորեն օգտագործվել նաև սպորտային հոգեբանության բնագավառում:

Սարքը էլեկտրոնային սարքավորումների համալիր մարտկոց է, որը ներառում է հոգեշարժիչ ցուցանիշների և հոգեկան վիճակների ախտորոշման ժամանակակից ինֆորմատիվ վեց սարքավորում՝ ռեակցիոմետր, տեպինգ թեստ, էլեկտրամաշկային դիմադրողականությունն ուսումնասիրող սարք, տրեմոմետր, արդյունավետությունն ու դրդապատճառներն ուսումնասիրող սարքեր: Այդ սարքավորումներով ախտորոշում են տասը հոգեբանական ցուցանիշներ, որոնք բավարար են լիարժեք հոգեբանական երաշխավորագրերի, մոդելային բնութագրերի, ինչպես նաև խորհրդատվության համար:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2009) (11) 2403 (13) A
A61B 17/00
(21) AM20090156 (22) 16.12.2009
(45) 25.08.2010
(71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)
(72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)
(73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան, 0002. Երևան. Մ. Սարյան 40ա, բն. 3 (AM)
(54) **Վերին ծնոտային ծոցի առջևի պատի ոսկրային պատուհանի փակման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ վերին ծնոտային ծոցի առջևի պատի ոսկրային պատուհանի փակման վիրաբուժական եղանակներին:

Բերանի նախադռան կողմից կատարում են փափուկ հյուսվածքների սեղանաձև կտրվածք, ապա մերկացնում են վերին ծնոտային ծոցի առջևի պատը: Ֆիսուր բորով հատում և հեռացնում են ոսկրային ֆրագմենտը: Կատարում են ծոցի սանացիա, որից հետո քթի խոռոչի և հայմորյան ծոցի միջև բացում են անցք: Խոռոչը տամպոնում են՝ տամպոնի մի ծայրը հանելով քթի խոռոչից:

Ոսկրային ֆրագմենտը սևեռում են մեղրամոմե թաղանթի վրա, որի չափերը գերազանցում է վերին ծնոտային ծոցի առջևի պատի վրա ստեղծված ոսկրային պատուհանը 4,0-4,5 մմ-ով, որից հետո ոսկրային ֆրագմենտը տեղակայում են նախկին տեղը: Վերքի եզրերը կարում են հանգուցային կարերով:

Բարձրացվում է եղանակի արդյունավետությունը:

(51) (2009) (11) 2404 (13) A
A61B 17/00
(21) AM20090155 (22) 16.12.2009
(45) 25.08.2010
(71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)
(72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)
(73) Յուրի Միքայելի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան, 0002. Երևան. Մ. Սարյան 40ա, բն. 3 (AM)
(54) **Վերին ծնոտային ծոցի պերֆորացիայի փակման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ վերին ծնոտային ծոցի պերֆորացիայի փակման վիրաբուժական եղանակներին:

Բերանի նախադռան կողմից կատարում են սեղանաձև կտրվածք, ապա մերկացնում են վերին ծնոտային ծոցի ատամնաբնային ելունն ատամնաբնի հետ միասին: Մոբիլիզացնում են լորձաթաղանթա-վերնոսկրային լաթը, որից հետո ատամնաբուրնը փակում են: Ատամնաբնային ելունը ծածկում են մեղրամոմե թաղանթով, որի վրա տեղակայում են 2-3 մմ հաստությամբ ապահանքայնացված ալլոգեն կամ քսենոգեն ոսկրային մատրիքս կամ թրոմբոցիտներով հարուստ պլազմայի հետ խառնված մանրացրած ապահանքայնացված ալլոգեն կամ քսենոգեն ոսկրային մատրիքս: Վերքի եզրերը կարում են հանգուցային կարերով:

Բարձրացվում է եղանակի արդյունավետությունը:

(51) (2009) (11) 2405 (13) A
A61B 17/00

(21) AM20090153 (22) 16.12.2009
(45) 25.08.2010

(71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)

(72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)

(73) Յուրի Միքայելի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան, 0002. Երևան. Մ. Սարյան 40ա, բն. 3 (AM)

(54) **Վերին ծնոտային ծոցի առջևի պատի ոսկրային պատուհանի փակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ վիրաբուժական ստոմատոլոգիային:

Բերանի նախադռան կողմից կատարում են փափուկ հյուսվածքների սեղանաձև կտրվածք, մերկացնում են վերին ծնոտային ծոցի առջևի պատը: Վերին ծնոտային ծոցի առջևի պատի ոսկրային պատուհանը սկզբից փակում են մեղրամոմե թաղանթով, որի չափերը գերազանցում են վերին ծնոտային ծոցի առջևի պատի ոսկրային պատուհանի չափերը 4.0-6.0 մմ-ով: Այնուհետև ոսկրային պատուհանը փակում են ալլոգեն ապահանքայնացված ոսկրային մատրիքսով, որը վերին ծնոտային ծոցի առջևի պատին սևեռում են կեղզուտե հանգուցակարերով, վերքի եզրերը կարում են հանգուցավոր կարերով:

Բարձրացվում է բուժման արդյունավետությունը:

(51) (2009) (11) 2406 (13) A
A61B 17/00

(21) AM20090152 (22) 16.12.2009
(45) 25.08.2010

(71) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)

(72) Յուրի Միքայելի Պողոսյան (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան (AM)

(73) Յուրի Միքայելի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Սեդա Սիմոնի Բուռնազյան, 0002. Երևան. Մ. Սարյան 40ա, բն. 3 (AM)

(54) **Պերֆորատիվ հայմորիտի բուժման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ վիրաբուժական ստոմատոլոգիային:

Բերանի նախադռան կողմից կատարում են

փափուկ հյուսվածքների սեղանաձև կտրվածք, վերին ծնոտային ծոցի առջևի պատի վրա բացում են ոսկրային պատուհան: Ծնոտային ծոցի և քթի խոռոչի միջև բացում են անցք, քթի խոռոչը տամպոնում են, մոբիլիզացնում լորձաթաղանթավերնոսկրային լաթը, փակում են ատամնաբունը, վերքի եզրերը կարում են հանգուցավոր կարերով: Վերին ծնոտային ծոցի առջևի պատի վրա բացած ոսկրային պատուհանը փակում են մեղրամոմե թաղանթով, որի վրա սևեռած է պատից հեռացված ոսկրային ֆրագմենտը, ատամնաբնի հատակի անցքը փակում են մեղրամոմե թաղանթով, իսկ ատամնաբունը լցնում են թրոմբոցիտներով հարուստ պլազմայի հետ խառնված ալլոգեն ապահանքայնացված և մանրացրած ոսկրային մատրիքսով:

Ապահովվում է հիվանդի կայուն ապաքինում:

(51) (2009) (11) 2407 (13) A
A61K 9/02

(21) AM20100046 (22) 27.04.2010
(45) 25.08.2010

(71) Տիգրան Ավագի Վարդանյան (AM)

(72) Տիգրան Ավագի Վարդանյան (AM)

(73) Տիգրան Ավագի Վարդանյան, 0078, Երևան, Մարգարյան 37, բն.23 (AM)

(54) **Ուղիղաղիքային մոմիկ**

(57) Գյուտը վերաբերում է դեղագործությանը, մասնավորապես՝ բուսական և կենդանական հանուկներ պարունակող մոմիկների դեղաձևերի տեխնոլոգիային:

Մոմիկը պարունակում է ազդող նյութ և մոմիկային հիմք: Որպես ազդող նյութ այն պարունակում է ակնամոմի սպիրտային հանուկ, չիչխանի յուղային հանուկ և մասուրի յուղային հանուկ, որպես մոմիկային հիմք՝ 1:0,6:0,4 հարաբերակցությամբ վերցրած հիդրոգենիզացված յուղի, կակաոյի յուղի և պարաֆինի խառնուրդ: 2,0գ զանգվածով մեկ մոմիկի համար բաղադրամասերը վերցրած են հետևյալ հարաբերակցությամբ, գ. ակնամոմի սպիրտային հանուկ՝ 0.2, չիչխանի յուղային հանուկ՝ 0.15, մասուրի յուղային հանուկ՝ 0.15, մոմիկային հիմք՝ մնացածը:

Ընդլայնվում է հակաթուրքային միջոցների տեսականին, ինչպես նաև հակաբորբոքային և վերականգնիչ միջոցների գործողության սպեկտրը:

(51) (2009) (11) 2408 (13) A
A61K 9/02

(21) AM20100063 (22) 24.05.2010
(45) 25.08.2010

(71) Մարիա Մուշեղի Փաշայան (AM), Յրաչյա
Գարեգինի Յովհաննիսյան (AM)

(72) Մարիա Մուշեղի Փաշայան (AM), Յրաչյա
Գարեգինի Յովհաննիսյան (AM)

(73) Մարիա Մուշեղի Փաշայան, 0015, Երևան,
Գրիգոր Լուսավորչի 12, բն. 42 (AM), Յրաչյա
Գարեգինի Յովհաննիսյան, 0025, Երևան, Այգես-
տանի 9-րդ փող. 69, բն. 34 (AM)

(54) Մոմիկ հեշտոցային դիսբակտերիոզների
բուժման համար

(57) Գյուտը վերաբերում է դեղագործությանը,
մասնավորապես՝ մոմիկների դեղաձևերի տեխ-
նոլոգիային:

Հայտարկված է մոմիկ հեշտոցային դիսբակ-
տերիոզների բուժման համար: Մոմիկն ունի երկու
շերտ՝ ներքին (միջուկը) և արտաքին: Յուրա-
քանչյուր շերտը պարունակում է ազդող նյութ և
հիդրոֆոբ մոմիկային հիմք: Միջուկը որպես ազդող
նյութ պարունակում է *Lactobacillus crispatus* MH08
շտամի լիոֆիլ եղանակով չորացրած, առնվազն, 108
ԳԱՄ (գաղութ առաջացնող միավոր) 1 մոմիկում:
Արտաքին շերտը որպես ազդող նյութ պարունակում
է հակաբակտերիալ ակտիվություն ունեցող
դեղաբույսերի հազարատերևուկ սովորականի,
եզան լեզվի մեծի, սխտորի և երիցուկ դեղատնայինի
լիոֆիլիզացված հանուկներ, կամ հակաբիոտիկ,
որի նկատմամբ լակտոբակտերիաների շտամը
ցուցաբերում է բարձր կայունություն: Միջուկի և
արտաքին շերտի հիմքերն ունեն տարբեր հալման
շեմաստիճաններ:

Ապահովվում է դեղամիջոցի հարմարավետ
կիրառումը և կրճատվում են բուժման
ժամկետները՝ իրարից տարանջատված և տարբեր
ժամկետներում ձերբազատվող պրոբիոտիկների
և հակաբիոտիկների մեկ մոմիկում համատեղման
շնորհիվ:

(51) (2009) (11) 2409 (13) A
B23B 1/00

(21) AM20090009 (22) 16.02.2009
(45) 25.08.2010

(71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(73) Ալեքսան Արզումանյան, 3102, Գյումրի,
Գոգունցի 6, բն. 4ա (AM)

(54) Միաբյուրեղային կտրող տարրով գործիքով
նյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է նյութերի, մասնա-
վորապես՝ մետաղների մշակմանը և կտրող է
կիրառվել գերկարծր կտրող սայրերով անընդհատ
և ընդհատուն կտրման պայմաններում:

Փորձնական կամ անալիտիկ եղանակով
նախապես որոշում են տվյալ նյութի մշակման
այն ռեժիմները, որոնց դեպքում կտրման գոտում
ապահովվում է 130°C–200°C ջերմաստիճանը, որից
հետո մշակման գործընթացն իրականացնում են
կտրման գոտին լույսի աղբյուրով լուսավորելով:

Բարձրացվում է մշակման գործընթացի
արդյունավետությունը:

(51) (2009) (11) 2410 (13) A
B23C 5/00

B23C 5/16

(21) AM20090010 (22) 16.02.2009
(45) 25.08.2010

(71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(73) Ալեքսան Մկրտչի Արզումանյան, 3102,
Գյումրի, Գոգունցի 6, բն. 4ա (AM)

(54) Ֆրեզ

(57) Գյուտը վերաբերում է մետաղների
մշակման բնագավառին և կտրող է կիրառվել
գունավոր մետաղների և համաձուլվածքների
միաբյուրեղային կտրող թիթեղիկով օժտված
գործիքներով նուրբ անընդհատ և ընդհատուն
կտրման գործընթացներում:

Ֆրեզն ունի իրան, իրանի վրա մշակված
փորվածքում տեղակայված՝ կտրող թիթեղիկի
անհրաժեշտ երկրաչափությունն ապահովող
տակդիր և լուսավորման ենթակա լավարկված
դիրքով կողմնորոշված արհեստական կորունդե
կտրող թիթեղիկ: Իրանի մեջ կատարված է կտրող
թիթեղիկի օպտիկական առանցքին համառանցք
միջանցիկ անցք, որի մեջ տեղակայված են լույսի
աղբյուր և էլեկտրասնուցման գալվանական
տարրեր:

Ապահովվում է կտրման գոտում կտրող թիթե-
ղիկի առավելագույն լուսավորումը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2411 (13) A
B24B 49/00
G02B 27/14
G05B 19/00
 (21) **AM200800086** (22) **17.06.2008**
 (45) 03.11.2008
 (71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
 (72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
 (73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) Պինդ մարմնի մակերևույթի փայլեցման և փայլքի որակի ավտոմատ կառավարման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է պինդ մարմինների մակերևույթների մշակման տեխնիկային:
 Պինդ մարմնի մակերևույթը փայլեցնում են, չորացնում այն և դրա վրա ներգործում են փայլաչափի լուսային ճառագայթներով: Անդրադարձած լուսային ճառագայթների էներգիան կերպափոխում են ազդանշանային արժեքների: Այդ արժեքները համեմատում են ստուգանմուշային անվանականացման չափանմուշների նվազագույն արժեքների հետ: Որոշում են կոնֆլիկտային արժեքները և դրանք հաղորդում պատրաստի արտադրանքը տեղափոխող փոխակրիչի շարժաբեռին և դրա հրիչին: Հրիչի միջոցով անորակ արտադրանքը տեղափոխում են անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչի վրա: Կարգավորման մեխանիզմի միջոցով կարգավորում են փայլեցված մարմնի մակերևույթի և փայլաչափ սարքի միջև եղած բացակի բարձրությունը: Կոնֆլիկտային արժեքները հաղորդում են անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչի լրացուցիչ շարժաբեռին ու լրացուցիչ հրիչին և կարգավորման մեխանիզմի ու փայլեցման սարքի շարժաբեռին: Որոշում են ազդանշանային արժեքների բոլոր փոփոխությունները, դրանց միջոցով կարգավորում փոխակրիչների շարժաբեռների արագությունները և դրանց հրիչները գործողության մեջ մտցնելու պահերը: Առավելագույն արժեքներով որոշում են փայլեցման սարքերի մաշվածության աստիճանը և նորով փոխարինելու ժամանակը:
 Բարձրացվում է որակի հսկման ճշգրտությունը և արագացվում է այդ գործընթացը, 1 նկ. :

(51) (2009) (11) 2412 (13) A
B24B 49/00
G02B 27/14
G05B 19/00
 (21) **AM200800085** (22) **17.06.2008**
 (45) 03.11.2008
 (71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
 (72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
 (73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) Պինդ մարմնի մակերևույթի փայլեցման և փայլքի որակի ավտոմատ կառավարման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է պինդ մարմինների մակերևույթների մշակման տեխնիկային:
 Փայլեցված և չորացված պինդ մարմնի մակերևույթի վրա ներգործում են լուսային ճառագայթներով, ինչը իրականացնում են փայլաչափերի հավաքածուի միջոցով: Հավաքածուի փայլաչափիչ սարքերը բաշխում են պինդ մարմնի ընդլայնական կտրվածքի վրա, միմյանցից հավասար հեռավորությամբ: Փայլաչափերի անդրադարձած լուսային ճառագայթների էներգիա կերպափոխված ազդանշանային արժեքները համեմատում են ստուգանմուշի անվանական նվազագույն արժեքի հետ: Որոշում են կոնֆլիկտային արժեքները: Կոնֆլիկտային արժեքների հիման վրա կարգավորում են փոխակրիչների և փայլեցման սարքերի արագությունները, դրանց շարժաբեռների հզորությունները և հրիչները գործողության մեջ մտցնելու պահերը: Առավելագույն արժեքների միջոցով որոշում են փայլեցման սարքերի մաշվածության աստիճանը և դրանք նորոգելու կամ նորերով փոխարինելու ժամանակը:
 Բարձրացվում է որակի հսկման ճշգրտությունը և արագացվում է այդ գործընթացը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2413 (13) A
B24B 49/00
B24B 49/12
G02B 27/14
G05B 19/00

(21) **AM20080084** (22) **17.06.2008**
(45) 03.11.2008
(71) Չիզա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիզա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիզա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) **Պինդ մարմնի մակերևույթի փայլեցման և փայլքի որակի ավտոմատ կառավարման եղանակ**

(57) Զարերի կամ մետաղների փայլեցված մակերևույթի վրա ներգործում են փայլաչափի լուսային ճառագայթներով, անդրադարձած ճառագայթների էներգիան կերպափոխում են ազդանշանային արժեքների, համեմատում ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների հետ, որոշում կոնֆլիկտային արժեքները և հաղորդում պատրաստի արտադրանքը տեղափոխող փոխակրիչի շարժաբերին և հրիչին: Նույն գործընթացը կրկնում են անորակ արտադրանքի հետ, ստացված կոնֆլիկտային արժեքները միաժամանակ հաղորդում են անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչի շարժաբերին, դրա հրիչին և լրացուցիչ փայլեցման սարքի շարժաբերին, գտնում են պատրաստի արտադրանքը տեղափոխող և անորակը հետ վերադարձնող փոխակրիչների շարժաբերների, դրանց հրիչների, երկու փայլեցման սարքերի շարժաբերների համար ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների և կոնֆլիկտային արժեքների միջև տարբերությունները, դրանց միջոցով կարգավորում են երկու փոխակրիչների, երկու փայլեցման սարքերի շարժաբերների արագությունները, հրիչները գործողության մեջ մտցնելու պահերը: Փայլեցման սարքերի շարժաբերների համար ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների և կոնֆլիկտային արժեքների միջև տարբերության առավելագույն արժեքների միջոցով որոշում են փայլեցման սարքերի մաշվածության աստիճանը և նորով փոխարինելու ժամանակը:

Բարձրացվում է փայլի որակի հսկման ճշգրտությունը, արագացվում է փայլեցման գործընթացը, 1 նկ.:

(51) **(2009)** (11) **2414** (13) **A**
B24B 49/00
B24B 49/12
G02B 27/14
G05B 19/00

(21) **AM20080082** (22) **17.06.2008**
(45) 03.11.2008
(71) Չիզա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)
(72) Չիզա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)
(73) Չիզա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան, 0038, Երևան, Արզումանյան 3, բն.7 (AM)
(54) **Պինդ մարմնի մակերևույթի փայլեցման և փայլքի որակի ավտոմատ կառավարման եղանակ**

(57) Գյուղը վերաբերում է պինդ մարմինների մշակման բնագավառին, մասնավորապես՝ դրանց փայլեցման եղանակներին և կարող է կիրառվել քարերի և մետաղների փայլեցման գործընթացում:

Պինդ մարմնի մակերևույթը փայլեցնում են և ներգործում դրա վրա փայլաչափի լուսային ճառագայթներով, անդրադարձած լուսային ճառագայթների էներգիան կերպափոխում են ազդանշանային արժեքների, համեմատում են վերջիններս ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների հետ, որոշում կոնֆլիկտային արժեքները և դրանք հաղորդում պատրաստի արտադրանքը տեղափոխող փոխակրիչի շարժաբերին և դրա հրիչին: Միաժամանակ լուսային ճառագայթների ազդանշանային կոնֆլիկտային արժեքները հաղորդում են անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչի շարժաբերին և դրա հրիչին, գտնում են պատրաստի արտադրանքը տեղափոխող և անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչների շարժաբերների և դրանց հրիչների համար ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների և կոնֆլիկտային արժեքների միջև տարբերությունները, այնուհետև դրանց միջոցով կարգավորում պատրաստի արտադրանքը տեղափոխող և անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչների շարժաբերների արագությունները և դրանց հրիչները գործողության մեջ մտցնելու պահերը:

Բարձրացվում է փայլքի որակի հսկման ճշգրտությունը, արագացվում է փայլեցման գործընթացը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2415 (13) A
B24B 49/00
B24B 49/12
G02B 27/14
G05B 19/00
(21) **AM20080083** (22) **17.06.2008**
(45) 03.11.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) **Պինդ մարմնի մակերևույթի փայլեցման և փայլքի որակի ավտոմատ կառավարման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է պինդ մարմինների մշակման բնագավառին, մասնավորապես՝ դրանց փայլեցման եղանակներին և կարող է կիրառվել քարերի և մետաղների փայլեցման գործընթացում:
Փայլեցված մակերևույթի վրա ներգործում են փայլաչափի լուսային ճառագայթներով, անդրադարձած ճառագայթների էներգիան կերպափոխում են ազդանշանային արժեքների, համեմատում վերջիններս ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների հետ, որոշում կոնֆլիկտային արժեքները և դրանք հաղորդում պատրաստի արտադրանքը տեղափոխող փոխակրիչի շարժաբերին և դրա հրիչին: Միաժամանակ լուսային ճառագայթների ազդանշանային կոնֆլիկտային արժեքները հաղորդում են անորակ արտադրանքը հետ վերադարձնող փոխակրիչի շարժաբերին, դրա հրիչին և փայլեցման սարքի շարժաբերին: Գտնում են երկու փոխակրիչների շարժաբերների, դրանց հրիչների ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների և կոնֆլիկտային արժեքների միջև տարբերությունները, դրանց միջոցով կարգավորում փոխակրիչների շարժաբերների արագությունները և դրանց հրիչները գործողության մեջ մտցնելու պահերը, այնուհետև գտնում են փայլեցման սարքի շարժաբերի համար ստուգանմուշային անվանականացման չափանիշների նվազագույն արժեքների և կոնֆլիկտային արժեքների միջև տարբերության առավելագույն արժեքը և որոշում փայլեցման սարքի մաշվածության աստիճանը և այն նորով փոխարինելու ժամանակը:
Բարձրացվում է փայլքի որակի հսկման ճշգրտությունը, արագացվում է փայլեցման գործընթացը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2416 (13) A
B24B 49/12
(21) **AM20080087** (22) **17.06.2008**
(45) 03.11.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան, 0038, Երևան, Արզումանյան 3, բն. 7 (AM)
(54) **Պինդ մարմինների մակերևույթների փայլեցման և փայլքի որակի հսկման ավտոմատ հոսքագիծ**
(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական մշակման տեխնիկային:
Հոսքագիծը լրացուցիչ ունի մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկներ և թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկ, որի մուտքը հաջորդաբար միացված տրանզիստորային ուժեղարարի, կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի և տվիչների միջոցով միացված է փայլաչափի սարքին, իսկ ելքը՝ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարի, շեմային սարքից և ժամանակի ռելեից կազմված բլոկ-սխեմայի միջոցով մագնիսական սոլենոիդով հրիչին, իսկ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկների և ուժեղարարից, շեմային սարքից, ժամանակի ռելեից, տվիչից, իմպուլսաֆազային բլոկից ու թիրիստորային ուժեղարարից կազմված բլոկ-սխեմայի միջոցով բոլոր շարժաբերներին: Փայլաչափից սարքի փայլքի արժեքի գրանցման միկրոամպերմետրի մուտքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միակցված է թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկի ելքին:
Մեծացվում է փայլքի չափման ու որակի հսկման ճշգրտությունը և այդ գործընթացի արագությունը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2417 (13) A
B24B 49/12
(21) **AM20080090** (22) **17.06.2008**
(45) 01.09.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)

(73) Չիզա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)

(54) Պինդ մարմինների մակերևույթների փայլեցման և փայլքի որակի հսկման ավտոմատ հոսքագիծ

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական մշակման տեխնիկային:

Հոսքագիծն ունի միմյանց հետ փոխկապակցված փայլեցման ենթակա մարմինների տեղափոխման և անորակ մարմինների հետ վերադարձման, տարբեր ուղղություններով շարժվող երկու փոխակրիչներ: Փոխակրիչն ունի շարժաբեր ունեցող փայլեցման հաստոց, փայլեցված մակերևույթների մաքրման ու չորացման սարք, ավտոմատ կառավարման ու փայլքի որակի հսկման ավտոմատ համակարգեր ունեցող շարժաբեր ու մագնիսական սուլենոիդով հրիչ: Հոսքագիծն ունի նաև փայլաչափիչ սարք և պիտանի արտադրանքի ընդունման տարողություն: Յուրաքանչյուր փոխակրիչի փայլաչափիչ սարքն իրականացված է փայլաչափիչ սարքերի հավաքածուի տեսքով: Փոխակրիչներն ունեն թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկ, որի մուտքը հաջորդաբար միացված տրանզիստորային ուժեղարարի, կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի և տվիչների միջոցով միացված է հավաքածուի փայլաչափիչ սարքերին, իսկ ելքը՝ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից և ժամանակի ռելեից կազմված բլոկ-սխեմայի միջոցով մագնիսական սուլենոիդով հրիչին, իսկ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից, ժամանակի ռելեից, տվիչից, իմպուլսաֆազային բլոկից ու թիրիստորային ուժեղարարից կազմված բլոկ-սխեմայի միջոցով վերոնշված բոլոր շարժաբերներին: Հոսքագիծը լրացուցիչ ունի փայլքի արժեքի ընդունման ու որակի հսկման վերաբերյալ տվյալների գրանցման ծրագիր ունեցող համակարգիչ, որի մուտքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միակցված է թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկի ելքին:

Մեծացվում է փայլքի չափման ու որակի հսկման ճշգրտությունը և այդ գործընթացի արագությունը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2418 (13) A
B24B 49/12

(21) AM20080089 (22) 17.06.2008

(45) 01.09.2008

(71) Չիզա Ասատուրի Բաբայան (AM)

(72) Չիզա Ասատուրի Բաբայան (AM)

(73) Չիզա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)

(54) Պինդ մարմինների մակերևույթների փայլեցման և փայլքի որակի հսկման ավտոմատ հոսքագիծ

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական մշակման տեխնիկային:

Հոսքագիծն ունի միմյանց հետ փոխկապակցված փայլեցման ենթակա մարմինների տեղափոխման և անորակ մարմինների հետ վերադարձման, տարբեր ուղղություններով շարժվող երկու փոխակրիչներ: Փոխակրիչն ունի շարժաբեր ունեցող փայլեցման հաստոց, փայլեցված մակերևույթների մաքրման ու չորացման սարք, ավտոմատ կառավարման ու փայլքի որակի հսկման ավտոմատ համակարգեր ունեցող շարժաբեր ու մագնիսական սուլենոիդով հրիչ: Հոսքագիծն ունի նաև փայլաչափիչ սարք և պիտանի արտադրանքի ընդունման տարողություն: Փոխակրիչներն ունեն թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկ, որի մուտքը հաջորդաբար միացված տրանզիստորային ուժեղարարի, կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի և տվիչների միջոցով միացված է փայլաչափիչ սարքին, իսկ ելքը՝ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից և ժամանակի ռելեից կազմված բլոկ-սխեմայի միջոցով մագնիսական սուլենոիդով հրիչին, իսկ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից, ժամանակի ռելեից, տվիչից, իմպուլսաֆազային բլոկից ու թիրիստորային ուժեղարարից կազմված բլոկ-սխեմայի միջոցով վերոնշված բոլոր շարժաբերներին: Հոսքագիծը լրացուցիչ ունի փայլքի արժեքի ընդունման ու որակի հսկման վերաբերյալ տվյալների գրանցման ծրագիր ունեցող համակարգիչ, որի մուտքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միակցված է թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկի ելքին:

Մեծացվում է փայլքի չափման ու որակի հսկման ճշգրտությունը և այդ գործընթացի արագությունը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2419 (13) A
B24B 49/12
(21) AM200800088 (22) 17.06.2008
(45) 01.10.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) Պինդ մարմինների մակերևույթների փայլեցման և փայլքի որակի հսկման ավտոմատ հոսքագիծ
(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական մշակման տեխնիկային:

Հոսքագիծը լրացուցիչ ունի մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկներ և թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկ, որի մուտքը հաջորդաբար միացված տրանզիստորային ուժեղարարի, կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի և տվիչների միջոցով միացված է փայլաչափիչ սարքին, իսկ ելքը՝ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից և ժամանակի ռելեից կազմված բլոկ-սխեմայի միջոցով մագնիսական սղենոիդով հրիչին, իսկ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկների և ուժեղարարից, շեմային սարքից, ժամանակի ռելեից, տվիչից, իմպուլսաֆազային բլոկից ու թիրիստորային ուժեղարարից կազմված բլոկ-սխեմայի միջոցով բոլոր շարժաբերներին: Հոսքագիծը լրացուցիչ ունի փայլքի արժեքի ընդունման ու որակի հսկման վերաբերյալ տվյալների գրանցման ծրագիր ունեցող համակարգիչ, որի մուտքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միացված է թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկի ելքին:

Մեծացվում է փայլքի չափման ու որակի հսկման ճշգրտությունը և այդ գործընթացի արագությունը, 1 նկ.:

(51) (2009) (11) 2420 (13) A
B24B 49/12
(21) AM200800079 (22) 17.06.2008
(45) 01.10.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)

(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM), Էլեոնորա Լիպարիտի Իգնատյան, 0038, Երևան, Արզումանյան 3, բն. 7 (AM)
(54) Ավտոմատ փայլաչափիչ
(57) Փայլաչափիչն ունի ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող իրանի մեջ տեղադրված օպտիկական համակարգ և դրան միացված միկրոամպերմետր:

Օպտիկական համակարգն ունի լույսի աղբյուր, դրա դիմաց տեղադրված օբյեկտիվ, ոսպնյակ, լուսատրանզիստոր և տրանզիստորային ուժեղարար: Փայլաչափիչն ունի նաև թվանշանաանալոգային կերպափոխիչ ունեցող հաշվիչ բլոկ, որի ելքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միացված է միկրոամպերմետրին, իսկ մուտքը՝ միմյանց հաջորդաբար միացված կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի միջոցով միացված է տրանզիստորային ուժեղարարին:

Ապահովվում են փայլքի արժեքի չափման ճշգրտության բարձրացումը, որակի հսկման ժամանակահատվածի կրճատումը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2421 (13) A
B24B 49/12
(21) AM200800080 (22) 17.06.2008
(45) 01.10.2008
(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)
(54) Ավտոմատ փայլաչափիչ
(57) Փայլաչափիչն ունի ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող իրանի մեջ տեղադրված օպտիկական համակարգ և դրան միացված, փայլքի որակի գրանցման ու գնահատման սարք հանդիսացող համակարգիչ:

Օպտիկական համակարգն ունի լույսի աղբյուր, դրա դիմաց տեղադրված օբյեկտիվ, ոսպնյակ, լուսատրանզիստոր և տրանզիստորային ուժեղարար: Փայլաչափիչն ունի նաև թվանշանաանալոգային կերպափոխիչ ունեցող

հաշվիչ բլոկ, որի ելքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միացված է համակարգչին, իսկ մուտքը՝ միմյանց հաջորդաբար միացված կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի միջոցով միացված է տրանզիստորային ուժեղարարին:

Ապահովվում են փայլքի որակի հսկման ճշգրտության բարձրացումը և որակի հսկման ժամանակահատվածի կրճատումը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2422 (13) A
B24B 49/12

(21) AM20080081 (22) 17.06.2008
(45) 01.10.2008

(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)

(54) Ավտոմատ փայլաչափիչ

(57) Փայլաչափիչն ունի ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեող իրանի մեջ տեղադրված օպտիկական համակարգ և դրան միացված, փայլքի որակի գրանցման ու գնահատման սարք հանդիսացող համակարգիչ:

Օպտիկական համակարգն ունի լույսի աղբյուրների, դրանց դիմաց տեղադրված օբյեկտիվների, ոսպնյակների, լուսատրանզիստորների և տրանզիստորային ուժեղարարների հավաքածուներ: Փայլաչափիչն ունի թվանշանաանալոգային կերպափոխիչ ունեցող հաշվիչ բլոկ, որի ելքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միացված է համակարգչին, իսկ մուտքը՝ միմյանց հաջորդաբար միացված կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմաների հավաքածուի միջոցով միացված է տրանզիստորային ուժեղարարին: Հավաքածուներից յուրաքանչյուրը կազմված է 2-12 տարրերից:

Ապահովվում են փայլքի չափման ճշգրտության և փայլաչափիչի օգտագործման հարմարավետության բարձրացումը, փայլքի չափման արագության մեծացումը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2423 (13) A
B24B 49/12

(21) AM20080091 (22) 17.06.2008
(45) 01.10.2008

(71) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(72) Չիգա Ասատուրի Բաբայան (AM)
(73) Չիգա Ասատուրի Բաբայան, 0001, Երևան, Թումանյան 30, բն. 9 (AM)

(54) Պինդ մարմինների մակերևույթների փայլեցման և փայլքի որակի հսկման ավտոմատ հոսքագիծ

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկական մշակման տեխնիկային:

Հոսքագիծը լրացուցիչ ունի մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկներ և թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկ, որի մուտքը հաջորդաբար միացված տրանզիստորային ուժեղարարի, կերպափոխիչ, ընդունիչ ու հաղորդիչ, հիշողության և համեմատման բլոկներից կազմված բլոկ-սխեմայի և տվիչների միջոցով միացված է փայլաչափիչ սարքին, իսկ ելքը՝ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի և ուժեղարարից, շեմային սարքից և ժամանակի ռելեից կազմված բլոկ-սխեմայի միջոցով միացված է մագնիսական սոլենոիդով հրիչին, իսկ մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկների և ուժեղարարից, շեմային սարքից, ժամանակի ռելեից, տվիչից, իմպուլսաֆազային բլոկից ու թիրիստորային ուժեղարարից կազմված բլոկ-սխեմայի միջոցով միացված է բոլոր շարժաբեքներին: Հոսքագիծը յուրաքանչյուր փայլաչափիչ սարքի համար լրացուցիչ ունի փայլքի արժեքի ընդունման ու որակի հսկման վերաբերյալ տվյալների գրանցման ծրագիր ունեցող համակարգիչ, որի մուտքը մաթեմատիկական կոնֆլիկտային մոդելի մշակման բլոկի միջոցով միացված է թվանշանաանալոգային կերպափոխիչով հաշվիչ բլոկի ելքին, ընդ որում փայլաչափիչ սարքն ունի բացակի մեծության կարգավորման մեխանիզմ:

Մեծացվում է փայլքի չափման ու որակի հսկման ճշգրտությունը և այդ գործընթացի արագությունը, 2 նկ.:

(51) (2009) (11) 2424 (13) A
B25J 1/00

(21) AM20100045 (22) 26.04.2010
(45) 25.08.2010

(71) Յուրի Լևոնի Սարգսյան (AM), Արմեն Գերասիմի
Խառատյան (AM), Սմբատ Տիգրանի Մելքոնյան (AM)
(72) Յուրի Լևոնի Սարգսյան (AM), Արմեն Գերասիմի
Խառատյան (AM), Սմբատ Տիգրանի Մելքոնյան (AM)
(73) Յուրի Լևոնի Սարգսյան, 0033, Երևան, Ա.Ավե-
տիսյան 70, բն. 99 (AM), Արմեն Գերասիմի Խա-
ռատյան, 2002, Վանաձոր, Բանակի փող. Նրբ.,4
(AM), Սմբատ Տիգրանի Մելքոնյան, 0054, Երևան,
Դավթաշեն 3-րդ թաղամաս 13, բն. 26 (AM)

(54) **Կառավարվող համընթաց շարժում իրագոր-
ծող մանիպուլյատոր**

(57) Գյուտը վերաբերում է հողակապա-լծակային
ուղղորդ մեխանիզմներին, համընթաց շարժում
իրագործող մանիպուլյատորներին, որոնք
կիրառվում են բժշկական սարքավորումներում,
կարգաբերվող ավտոմատ գծերում:

Մանիպուլյատորն ունի կանգնակին և տար-
վող օղակին հողակապորեն միացված երեք
միանման կինեմատիկ շղթա, շղթաների հողա-
կապերի առանցքները տարածության մեջ փոխ-
ուղղահայաց են:

Ընդլայնվում են մանիպուլյատորի ֆունկցիո-
նալ հնարավորությունները 1 նկ.:

(51) (2009) (11) 2425 (13) A
C01B 33/00

(21) AM20080114 (22) 22.07.2008
(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Յամլետ Յայկի
Յակոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)
(72) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ Յամ-
լետի Յակոբյան (AM)
(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան
40ա (AM), Յամլետ Յայկի Յակոբյան, 0028,
Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դա-
վիթ Յամլետի Յակոբյան, 0028, Երևան, Օրբելի
եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Ջեղուկ ապակու ստացման եղանակ և դրա
իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է հեղուկ ապակու ստաց-
մանը, որը կարող է օգտագործվել ջերմամե-
կուսիչ, ջերմակլանիչ, ջերմակայուն և հրակայուն

նյութերի ստացման համար, ինչպես նաև՝ որպես
կապակցանյութ և սոսինձ:

Նախապես ակտիվացված փքապեռլիտի
և դիատոմիտի խառնուրդը մշակում են հիմքի
լուծույթով, նստվածքազատման միջոցով հեղուկ
ապակին անջատում են նստվածքից: Որպես ակ-
տիվացված դիատոմիտ օգտագործում են 400-
600°C ջերմաստիճանում թրծած դիատոմիտ:
Նախքան ելանյութերի խառնելը յուրաքանչյուրն
առանձին մշակում են հիմքի 20- 40 տոկոսանոց
լուծույթով: Խառնելու գործընթացը շարունակում
են մինչև մշակման ոչ ենթակա նստվածքի
ստացումը: Առաջարկված է նաև տեխնոլոգիական
գիծ եղանակի իրականացման համար:

Ավելանում է հեղուկ ապակու ելքը, պակա-
սում է ջրի կորուստը և բարձրացվում արտա-
դրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2009) (11) 2426 (13) A
C01B 33/00

(21) AM20080113 (22) 22.07.2008
(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Յամլետ Յայկի Յա-
կոբյան (AM), Դավիթ Յամլետի Յակոբյան (AM)
(72) Յամլետ Յայկի Յակոբյան (AM), Դավիթ
Յամլետի Յակոբյան (AM)
(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան
40ա (AM), Յամլետ Յայկի Յակոբյան, 0028,
Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM),
Դավիթ Յամլետի Յակոբյան, 0028, Երևան, Օրբելի
եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Ջեղուկ ապակու ստացման եղանակ և դրա
իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է հեղուկ ապակու
ստացմանը, որը կարող է օգտագործվել ջեր-
մամեկուսիչ, ջերմակլանիչ, ջերմակայուն և
ջրակայուն նյութերի ստացման համար, ար-
հեստական բարերի պատրաստման բնագա-
վառում, ինչպես նաև՝ որպես կապակցանյութ և
սոսինձ:

Մանրացված սիլիցիում պարունակող ապարը
ջերմամշակում են, ստացված հումքը ենթարկում
են հիդրոջերմային մշակման հիմքի լուծույթով և
ստացված զանգվածից նստվածքազատման մի-
ջոցով հեղուկ ապակին բաժանում են նստվածքից:

Որպես սիլիցիում պարունակող ապար օգտագործում են պեռլիտ, որի ջերմամշակումն իրականացնում են փքման միջոցով: Հիմքի լուծույթն ավելացնում են աստիճանաբար և խառնում: Գործընթացը շարունակում են մինչև մշակման ոչ ենթակա նստվածքի առաջացումը:

Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացման համար:

Ավելանում է հեղուկ ապակու ելքը, վերացվում է ջրի կորուստը և բարձրացվում արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

և այդ գործընթացը կրկնում են մինչև հեղուկ ապակու ստացումը ու դրա հավաքումը որպես տեխնոլոգիական արտադրանք և դեռևս մշակման ենթակա նստվածքների հավաքումը որպես տեխնոլոգիական պաշար: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացման համար:

Ավելանում է հեղուկ ապակու ելքը և պակասում նստվածքի ելքը, բարձրացվում է արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2009) (11) 2427 (13) A
C01B 33/00
(21) AM20080112 (22) 22.07.2008
(45) 01.10.2008
(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)
(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)
(54) **Հեղուկ ապակու ստացման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**
(57) Գյուտը վերաբերում է հեղուկ ապակու ստացմանը, որը կարող է օգտագործվել ջերմամեկուսիչ, ջերմակլանիչ, ջերմակայուն և ջրակայուն նյութերի ստացման համար, ինչպես նաև, որպես կապակցանյութ և սոսինձ:

Նախապես ակտիվացված սիլիցիում պարունակող ապարը՝ փքապեռլիտը բաժանում են բաժնեմասերի և աստիճանաբար ենթարկում հիդրոջերմային մշակման հիմքի լուծույթով: Մեկ բաժնեմասի մշակումից ստացված և նստվածքազատման միջոցով անջատված հեղուկ ֆազան լցնում են իրեն հաջորդող բաժնեմասի վրա: Նստվածքազատման միջոցով անջատված նստվածքների հիդրոջերմային մշակման գործընթացը կրկնում են մինչև մշակման ոչ ենթակա նստվածքի ստացումը: Փքապեռլիտի աստիճանաբար հիդրոջերմային մշակումն իրականացնում են որպես տեխնոլոգիական պաշար հավաքված հեղուկ ֆազերի խառնուրդով

(51) (2009) (11) 2428 (13) A
C03C 10/00
(21) AM20100052 (22) 05.05.2010
(45) 25.08.2010
(71) Աննա Բենիամինի Մաթևոսյան (AM), Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)
(72) Աննա Բենիամինի Մաթևոսյան (AM), Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)
(73) Աննա Բենիամինի Մաթևոսյան, 0037, Երևան, Բաբայան 36, բն.44 (AM), Նորա Մովսեսի Հարությունյան, 0041, Երևան, Էրեբունու 11, բն.30 (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան, 0012, Երևան, Վաղարշյան 21, բն. 26 (AM)
(54) **Ապակի ապակեբյուրեղային նյութերի համար**
(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ապակեբյուրեղային նյութերի համար ապակու բաղադրակազմին և կարող է կիրառվել սարքաշինության, օպտիկական, ֆոտոէլեկտրոնային և տիեզերական լազերային տեխնիկայի համար:

Ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ. %. B_2O_3 ՝ 40.5 – 55.0, Al_2O_3 ՝ 28.0 – 47.0, SiO_2 ՝ 1.5 – 3.2, CaO ՝ 0.5 – 1.4, Li_2O ՝ 1.5 – 5.4, K_2O ՝ 0.1 – 0.6, LiF ՝ 7.5 – 17.5:

Ստացված է ապակի ցածր եփման և սիտալացման երկաստիճանային ջերմամշակման ջերմաստիճաններով, բարձր մեխանիկական ամրությամբ, ջերմակայունությամբ և թափանցելիությամբ՝ սպեկտրի տեսանելի և ՈւՄ տիրույթում:

(51) (2009) (11) 2429 (13) A
C04B 9/00

(21) AM20080123 (22) 22.07.2008
(45) 01.10.2008

(71) «Էկոպեմլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեմլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն.133 (AM)

(54) **Պեմլիտամագնեզիտային շինվածքների պատրաստման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արդյունաբերությանը, մասնավորապես՝ պեմլիտամագնեզիտային շինվածքների պատրաստման եղանակին և դրա իրականացման համար տեխնոլոգիական գծին:

Պատրաստում են մագնեզիումի քլորիդի ջրային լուծույթ, փքապեմլիտը թրջում են ջրով, առանձին պատրաստում են կաուստիկ մագնեզիտի, անօրգանական լցանյութի, պնդացման արագարարի և նպատակային հավելանյութի պինդ խառնուրդ: Պինդ խառնուրդին ավելացնում են մագնեզիումի քլորիդի ջրային լուծույթը, թրջված փքապեմլիտը ու հեղուկ հավելանյութը, խառնում մինչև համասեռ զանգվածի ստանալը, ձևավորում և չորացնում այդ զանգվածը՝ ստանալով պեմլիտամագնեզիտային շինվածքներ: Որպես անօրգանական լցանյութ օգտագործում են ծակոտկեն լեռնային ապարներ: Փքապեմլիտի թրջման, մագնեզիումի քլորիդի ջրային լուծույթի պատրաստման և համասեռ զանգվածի պատրաստման համար օգտագործում են ձևավորված շինվածքների չորացման ընթացքում անջատված տաք ջուրը: Ձևավորված շինվածքների չորացումը կատարում են տաք օդի և գազերի այրման արգասիքի խառնուրդի միջավայրում՝ մինչև պահանջվող մնացորդային խոնավություն պահանջվող արժեքին հասնելը: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակն իրականացման համար:

Բարձրացվում է շինվածքների ամրությունը, փոքրացվում դրանց կծկումը և մեծացվում է տեխնոլոգիական գծի արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2009) (11) 2430 (13) A
C04B 14/00
C04B 28/00
C04B 38/08
B28B 5/00

(21) AM20080119 (22) 22.07.2008
(45) 01.10.2008

(71) «Էկոպեմլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեմլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Պեմլիտաբետոնի ստացման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արդյունաբերությանը: Համաձայն պեմլիտաբետոնի ստացման եղանակի համապատասխան հարաբերակցությամբ վերցված ելանյութերը՝ փքապեմլիտը, ցեմենտը, լցանյութերը, նպատակային հավելանյութերը և ջուրը խառնում են մինչև միատարր հիդրոզանգվածի ստացումը:

Նախքան ելանյութերի խառնումը փքապեմլիտը խոնավացնում կամ թրջում են, իսկ ցեմենտից, լցանյութերից և պինդ հավելանյութերից պատրաստում են ցեմենտաբարային խառնուրդ: Ստացված հիդրոզանգվածը ձևավորում են, ջերմամշակում են և պատրաստի շինվածքները պահեստավորում են, ընդ որում ջերմամշակման և պահեստավորման գործընթացներն իրականացնում են առնվազն երկճյուղ ենթահոսքագծերով: Ջերմամշակման գործընթացից ստացված տաք ջուրը և պահեստավորման գործընթացից ստացված թափոնները հետ են վերադարձվում հիդրոզանգվածի ստացման գործընթաց: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացման համար:

Փոքրացվում է պեմլիտաբետոնե շինվածքների կծկումը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2009) (11) 2431 (13) A
C04B 14/00
C08L 23/00
C08K 13/00
B28B 1/00

(21) **AM20080118** (22) **22.07.2008**

(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Պեռլիտացեմենտային շինվածքների պատրաստման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արդյունաբերությանը:

Փապեռլիտը, ցեմենտը, լցանյութերը, նպատակային հավելանյութերը և ջուրը խառնում են մինչև համասեռ հիդրոգանգվածի ստանալը, ստացված հիդրոգանգվածը ձևավորում են և ջերմամշակում: Նախքան ելանյութերի խառնումը փապեռլիտը խոնավացնում են կամ թրջում: Որպես լցանյութ օգտագործում են թեթև լեռնային ապար: Գործընթացից ստացված թափոնները և շինվածքների ձևավորման ու չորացման ընթացքում անջատված տաք ջուրը հետ են վերադարձնում տեխնոլոգիական գործընթաց: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացման համար:

Բարձրացվում է շինվածքների ամրությունը, փոքրացվում է դրանց կծկումը, մեծացվում է տեխնոլոգիական գծի արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) **(2009)** (11) **2432** (13) **A**

C04B 14/00

C04B 26/00

C08L 23/00

(21) **AM20080124** (22) **22.07.2008**

(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) Պլաստպեռլիտային շինվածքների պատրաստման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ

(57) Գյուտը վերաբերում է շինանյութերի արտադրությանը, մասնավորապես՝ պլաստպեռլիտային շինվածքների պատրաստման եղանակին և դրա իրականացման տեխնոլոգիական գծին:

Փապեռլիտը և սիլիկատային լցանյութը առանձին-առանձին թրջում են լուծիչով: Թրջված փապեռլիտին և սիլիկատային լցանյութին ավելացնում են լուծիչ պարունակող պոլիմերային կապակցանյութ և նպատակային հավելանյութ և ստացված զանգվածը խառնում են մինչև համասեռ զանգված ստանալը: Մամլմամբ ձևավորում են այդ զանգվածը, ապա չորացնում՝ ստանալով պլաստպեռլիտային շինվածքներ: Որպես սիլիկատային լցանյութ օգտագործում են ծակոտկեն լեռնային ապարներ, որպես նպատակային հավելանյութ՝ մակերևութաակտիվ նյութ, գունանյութ, պնդացման արագարար կամ դրանց խառնուրդը: Փապեռլիտի և սիլիկատային լցանյութի թրջման համար, ինչպես նաև բաղադրամասերի համասեռ զանգվածի պատրաստման համար օգտագործում են ձևավորված շինվածքների չորացման ընթացքում անջատված տաք լուծիչը: Ձևավորված շինվածքների չորացումը կատարում են տաք օդի և գազերի այրման արգասիքի խառնուրդի միջավայրում մինչև մնացորդային խոնավության պահանջվող արժեքին հասնելը: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացնելու համար:

Բարձրացվում է շինվածքների ամրությունը, փոքրացվում է դրանց կծկումը, մեծացվում է տեխնոլոգիական գծի արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) **(2009)**

(11) **2433**

(13) **A**

C04B 14/00

E04B 1/76

B28B 1/52

(21) **AM20080126** (22) **22.07.2008**
(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Երկշերտ պատյանով ջերմամեկուսիչ ճկուն շինվածք և դրա պատրաստման տեխնոլոգիական գիծ**

(57) Շինվածքն ունի ներքին անթափանց պատյան, դրա վրա հազգված արտաքին պաշտպանիչ պատյան: Արտաքին պաշտպանիչ պատյանն ունի ուղղանկյուն զուգահեռանիստի ձև:

Ներքին պատյանն ունի կողք-կողքի դասավորված, ջերմամեկուսիչ նյութով լցված գլանաձև բաժանմունքներ: Բաժանմունքներից յուրաքանչյուրը սեփական կողակար և տակակար ունեցող առանձնացված, ինքնուրույն տարողություն է: Բաժանմունքների ու արտաքին պատյանի բերաններն ունեն ընդհանուր փակակար: Արտաքին պատյանի և ներքին պատյանի բաժանմունքներից յուրաքանչյուրի հատակի տակակարերն անցնում են եռանկյունաձև ծավալածքների վրայով: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ շինվածքի պատրաստման համար:

Ապահովվում են շահագործման ժամկետի ընթացքում շինվածքի ջերմաֆիզիկական հատկությունների բարձրացումը՝ անկախ տեղադրման գործընթացից, շինվածքի պատրաստման գործընթացի պարզեցումը, 2 անկախ կետ, 8 նկ.:

(51) **(2009)** (11) **2434** (13) **A**
C04B 28/00
B28B 1/50

(21) **AM20080121** (22) **22.07.2008**
(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(73) «Էկոպեռլիտ» ՍՊԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM), Համլետ Հայկի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM), Դավիթ Համլետի Հակոբյան, 0028, Երևան, Օրբելի եղբայրների 6, բն. 133 (AM)

(54) **Պեռլիտակրային շինվածքների պատրաստման եղանակ և դրա իրականացման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուղը վերաբերում է շինանյութերի արտադրությանը, մասնավորապես՝ կրային կապակցանյութից, փքապեռլիտից և անօրգանական սիլիկատային լցանյութից պատրաստված շինվածքներին:

Ելանյութերը՝ փքապեռլիտը, բնական սիլիկատային լցանյութը, կրային ու ցեմենտային կապակցանյութերը, նպատակային հավելանյութերը և ջուրը խառնում են մինչև համասեռ հիդրոգանգվածի ստացումը, ստացված հիդրոգանգվածը ձևավորում են և ջերմամշակում: Նախքան բաղադրամասերի խառնումը փքապեռլիտը թրջում են ջրով, իսկ կրային կապակցանյութը՝ լուծում ջրում: Հիդրոգանգվածի ստացումը կատարում են տաք ջրով: Շինվածքների ջերմամշակումը կատարում են այրման գազերի արգասիքների և խոնավ օդի խառնուրդի միջավայրում: Առաջարկված է նաև տեխնոլոգիական գիծ եղանակի իրականացման համար:

Բարձրացվում է շինվածքների ամրությունը, մեծացվում է տեխնոլոգիական գծի արտադրողականությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) **(2009)** (11) **2435** (13) **A**
C04B 28/00
B28B 1/00

(21) **AM20080122** (22) **22.07.2008**
(45) 01.10.2008

(71) «Էկոպեռլիտ» ՍՊԸ (AM), Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

(72) Համլետ Հայկի Հակոբյան (AM), Դավիթ Համլետի Հակոբյան (AM)

